




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7141

Мор. Географичес.

281

S-44

1926


04 NOV 2009

ՀԱՅ. ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՐ-ՆՊԱՏԱԿԸ

ՀԱՅՈՑ ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆ
ՀԱՍՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Յեւ յեկեւ եւ լոյս թե որեւորեւ
յեղծելու, այլ՝ լրացնելու նրանց:
Ա. ԳԵՂԱՐՅԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. ԹԻՖԼ. ՅԵՎ. ՅԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ

ԹԻՖԼԻՍ - 1926 թ.

281

S-44

Հայոց լեկեղեցական բարեխախտությունը յեղ նրան հասնելու միջոցները

Մարդկային ընթացիկ կյանքում յուրաքանչյուր յերեւոյթ և գաղափար՝ միշտ յենթակա և զարգացման և զիփոխման: Դուք չեք աւանդ և չեք գտնի վոչ մի կյանք, վոր իր սկզբնական կենցաղով ու պայմանների գասավորությամբ՝ կարողանա անշարժ դրության մեջ մնալ և չը պահանջի ժամանակի վոգու և եվոլյուցիայի յենթակայությունը: Ինչպես յերեխան հետզհետե մեծանում, զարգանում և կատարելության և հասնում, այնպես ել՝ ամեն մի գաղափար՝ կյանքի ընթացքում՝ հետզհետե ուսումնասիրվում, լրացվում և կատարելության և հասնում: Սակայն յերբեք նրա կատարելությունը վերջնական չի կարող համարվել, քանի վոր մարդկային կյանքը՝ ընտելյան մեջ՝ ամեն անգամ նորանոր նվաճումներ անելով՝ իր հետ միասինամեն ինչփոփոխում և մոտեցնում և իր կենցաղային պայմաններին:

Հայ յեկեղեցին 17 դարի պատմություն ունի և նա ել այլ և այլ յեկեղեցիների նման ժամանակի ընթացքում կերպարանափոխվել և և լրացվել ու հարմարվել և ժամանակի ու շրջապատող պայմանների ազդեցությանը: Նա սկսվել և առաքելական պարզությամբ և առանց պաշտոնական ձևականությունների, քարոզել և հեթանոս ժողովրդին ավետարանի սիրո և աստվածային գաղափարը և կոչել և նրան քրիստոնեության, բայց ժամանակը և տիրող պայմանները նրան զրկել յեն նախնական պարզությունից և տվել յեն դույն ու պաշտոնական ընտել: Առաքելական մարութն ու գաղափարը հետզհետե նվաճելով ժողովրդի բոլոր մասաները՝ ընդգրկել են ոամիկից մինչև արքունիքի սահմանները և դառնալով աշխարհիկ տիրապետողների ձեռքին զենք, հետզհետե կերպարանափոխվել յեն, վերածվել պաշտոնական ձևակերպությունների, բարդացել յեն զանազան խրթին ու ավելորդ ձևերով ու արարողություններով և զարձել այնպիսի մի յերեւոյթ, վոր իրենից ներկայացրել և ամեն ինչ, բացի կենդանի սիրո և աստվածային տաճար կոչվելուց:



1119. 84

Այն ժամանակ, յերբ մեր յեկեղեցին յենթակա եր Հայոց արքունիքի և բունականների կամքին, նրան այս կամ այն ձև տալն ել՝ կախված եր պետութեան կամքից և ժամանակի կղերական դասից: Վերջինս իր գոյութեամբ կախումն ունենալով աշխարհիկ տիրողներից, միշտ յենթարկվում եր նրանց կամքին և ցուցմունքներին՝ յեկեղեցուն ձև տալու և կառավարելու գործում:

Յերբ հայ ազգը զրկվեց պետական կյանքից և վաստակ դարձավ հույն, թուրք և պարսիկ տիրապետողների, բնականաբար, մեր յեկեղեցին ել իրբն ժամանակի ժողովրդին ազգային գույն և նրան տոն տվող մի հիմնարկութուն, պետք է դարձյալ ազգվեր տիրապետող տարրերի թե՛ ճշունքների և թե՛ առհասարակ, նրանց քաղաքական հետապնդումների հորձանքներից ու ստանալ այս կամ այն կերպարանքը և կամ՝ հետզհետե բարդանալով, այլաբանութուններով ուռճանալով և անմեքենալիութեան աստիճանին յենթարկվելով՝ այնպիսի դրութեան հասնել, վոր ժողովուրդը, իրավամբ, զրկվեր հնարավորութունից՝ այդ բարդ և բազմազան զանգվածի մեջ փնտրել իր պարզ ու աննյութապաշտ աստծուն, իր սեր քարոզող և սեր անձնավորող Հիսուսին:

Յեվ երևի յեկեղեցու այդ բարդութունն եր պատճառը, վոր շատ անգամ հայ ժողովուրդը, պատերազմների ժամանակ, փոխանակ թշնամուն հալածելու է իր ֆիզիքականը ազատելու, լցվում եր յեկեղեցի, ապավինում եր նրան, փնտրում եր այնտեղ սիրտ յեվ հեղութեան աստծուն, վորը կորել եր կերպարանափոխված յեկեղեցու մեջ, և իր փնտրտուքի ժամին՝ անխնա կերպով կոտորվում և վոջնչանում եր թշնամուց: Սրանից վո՛չ ազգն եր շահվում, վո՛չ քրիստոնյական յեկեղեցին և վո՛չ ել մեր ճգնազգեաց և խոտաճարակ հոգևորականութունը: Սակայն աննպատակ կերպով, հանուն ինչ վոր անվորոշ հասկացողութեան՝ զոհվում և հետզհետե պակասում եր հայ թշվառ ժողովուրդը:

Այդ բարդութունն ու անվորոշութունը ի՞նչ միտք և նպատակ ունեն և ի՞նչ եր հետապնդում առհասարակ:

Յերբ միանգամ արդեն առաքելական յեկեղեցին սկսել եր յենթարկվել և նմանվել կոապաշտական մեհյանների ելութեանը, յերբ կուսք արձանների փոխարեն մուտք գործեց մեր յեկեղեցում՝ պատկերապաշտութունը և յերբ ժամանակի զխանականներն ու հոգևոր գործիչները սկսեցին յեկեղեցին լցնել հազարավոր բանաստեղծական ու որհնարանական յերգեցողութուններով ու սաղմոսյերգութուններով, նորա անշուշտ, հետապնդում էին

յերկու նպատակ. նախ՝ յեկեղեցին աստվածացման և անհատանլիութեան վիճակի մեջ դնել և յերկրորդ՝ ժողովրդին ներշնչել այնպիսի անվորոշ հավատ և յերկյուղածութուն, վոր նա այդ բանի համար վո՛չ միայն ի սպաս դնել իր աշխարհային հարստութունը, այլ և՛ իր կյանքը: Այս բանը հարկավոր եր նրա համար, վոր ժամանակակից հոգևոր կաստան, վորին ձգտում եր ամեն մի՝ գրի սև ու սպիտակ հասկացողը, — կարողանալ իր մշտական ապրուստը ապահովել և նույնիսկ՝ հետզհետե ճոխացնել իսկ նա՝ հատակվող ժողովրդի արյունն ել սուրբ համարելով, նրան սուրբերի շարքը անցկացնել՝ նախանձ շարժելու համար՝ հերթի կանգնող սերունդների մեջ...

Յեվ այս դրութունը շատ յերկար տևեց, վորովհետև ազգերի մշտական և անվերջ հոշոտումները միմեանց՝ թույլ չեին տալիս խաղաղ կյանք ստեղծելու և բավականաչափ կուլտուրա զարգացնելու, վորպեսզի մտքերը կարող լինեյին դատողութեան վորոշ աստիճանի հասնել և լսվն ու ոգտական ընտրելով, ավելորդն ու վնասակարը կյանքի բովից հեռացնել: Յեվ յեթե յերկար դարերն ել, իրենց ամբողջ շարքերի ընթացքում մարդկային միտքը վորոշ չափով զարգացնելու հնարավորութուն էին ստեղծում, դա ել միակողմանի եր լինում. և ինչպես արդեն նկատեցինք, մտավոր զարգացում ստացողի տեղը միայն հոգևոր ասպարեզն եր: Իսկ հոգևոր ասպարեզ մտնողը՝ իրավունք չունեն իր շրջանակից գուրս գալու և ազատ մտածելու: Ապա թե՛ վո՛չ պատրաստ եր նրա համար՝ աշխարհիկ տիրողի ֆաթը և հոգևոր իշխանութեան քանադրանքը:

Չը նայելով բոտ ամենայնի աննպատակ հանգամանքներին, բայց և այնպես՝ ամեն անգամ, հատարակութեան առաջավոր մասը մտածում եր հոգեվոր կյանքը շարժել և նրան հարմարեցնել աշխարհիկ և հետզհետե մտածողութեան նեղ շրջանակից գուրս յեկած՝ կյանքի ալիքներին:

Իսկ հոգևոր կյանքի շրջանակը լայնացնել և նրան իր սահմանափակ դրութունից գուրս հանելը՝ համազոր եր յեկեղեցական բարեփոխութեան, վորպիսի անունով և ծրագրով ել գուրս եին գալիս հայ յեկեղեցին սիրող հասարակական գործիչները, մանավանդ, անցյալ տասնամյակներից դարի յերկրորդ կեսից սկսած: Յեվ լեթե այդ շրջանից սկսած՝ ել ավելի ուժեղ կերպով առաջ յեկավ հայ յեկեղեցու բարեփոխութեան խնդիրը, պատճառը, անշուշտ մեծավ մասամբ, մեր պարբերական մամուլն եր, վորտեղ

հնարավորություն կար՝ որը-որին ծեծել և հասունացնել յեկեղեցական բարեփոխության ծրագիրը և այդ ուղղությամբ վորոշ հոսանք առաջ բերել: Յեվ քիչ գործ չը կատարեցին այդ ուղղությամբ Սրժբունին, Նազարյանը և ուրիշները, վորոնք մամուլի ղեկավարներ էին և դեռ այն ժամանակ, յերբ յեկեղեցին փառաբանեց կապված էր պետության հետ, նոքա հրապարակ գալով, գտնում էին, վոր՝ յեթե հայաստանեաց յեկեղեցում հիմնական ըարեփոխություն տեղի չունենա, նա հետզհետե հրապարակից դուրս կգա յեվ կանհետանա:

Ծրագրերը առաջարկվում էին վոմանց կողմից լայն և վոմանց կողմից սահմանափակ, բայց մի հանգամանք, վոր յեկեղեցին կապված էր պետության հետ, իսկ պետությունը՝ յեկեղեցին և հոգևորականությունը մի ողակ էր դարձրել իր մոտավոր և հեռավոր նպատակների համար առանձին ազգային խնդիրներում, բնական էր, վոր այսպիսի հանգամանքներում, գուցե այլ և այլ «փափուկ» հանգամանքներ՝ մեր հոգևոր բարձրագույն իշխանությունը թույլ չէին տալիս առաջավոր ժողովրդի կարծիքը և առաջարկությունը հաշվի առնելու և բարենորոգչական ծրագրերով զբաղվելու:

Իրեն ապացույց այն բանի, վոր ուսանայ յեկեղեցին ուժեղ կերպով յենթարկվում էր ցարական պետության քաղաքական ալիքների հոսանքներին և զրկված էր հնարավորությունից՝ թեկուզ իր վարչական մասում վորոշ բարեփոխություն մտցնել, ցույց և տալիս այն հանգամանքը, վոր Ռուսաստանից դուրս գտնված մեր յեկեղեցական կյանքը իր վարչական և մասամբ ել՝ ծիսական խնդիրներում բոլորովին նման չէր ուսանայ յեկեղեցական կյանքին: Ով ծանոթ և տաճկահայ յեկեղեցու պատմությունը, յեկեղեցական սահմանադրությունը, իսկույն կը համոզվի, վոր այնտեղ, ինչպես և այլ յերկրներում՝ յեկեղեցին կառավարվում էր միջ թե հոգևորականություն միահեծան կամքով և ձեռամբ միայն, այլ, գերադանցորեն, ժողովրդից ընտրված յերևութաբանական ժողովներով և այլևայլ՝ խստոր մարմիններով:

Յեվ դա այդպես էր, վորովհետև տիրող պետությունը որինակ Տաճկաստանում, չէր խառնվում հայ ժողովրդի յեկեղեցական գործերում. հետևաբար՝ այնտեղ ժողովուրդը ինքն էր տերն ու տնտերն իր յեկեղեցու, ապա ուրիշն, նա կարողացել էր վորոշ բարեփոխություն մտցնել՝ թեկուզ յեկեղեցու վարչական կյանքում:

Այն ժամանակ, յերբ Ռուսահայ յեկեղեցում ծուխը կախված էր միմիայն այս կամ այն քահանայի հետ, Տաճկահայաստանում ընդհանրապես, — ծուխը կապված էր յեկեղեցու հետ, իսկ քահանան միայն որինակատար էր և հովիտ էր յեկեղեցու համայնքը թաղային սխառմով և կամ՝ ժողովրդի հրավերի համաձայն:

Այն, ինչ վոր մինչեվ այսոր չի արել ուսանայ յեկեղեցին, վաղուց անտի գոյություն ունեւ՝ Տաճկահայ հոգեվոր կյանքում:

Վեր մի պատմություն քրքրու հավատացյալը չի հանդիպի այնպիսի իրականություն, վոր իրավամբ, հայ ժողովուրդը հենց վրաստանում, սրանից մի դար առաջ՝ հոգեվոր ասպարեզում՝ նորտույն էր վերածված:

Մենք մի նմուշ կը բերենք վրաստանի մայրաքաղաքի հոգեվոր կյանքից 19-րդ դարի առաջին կեսից, ցույց տալու համար, թե ինչ փոխարարություն էր տիրում այն ժամանակ յեկեղեցու տիրոջ՝ ժողովրդի և նրա որինակատար քահանայի միջև:

Քահանայությունը հենց Թիֆլիսում՝ անթիվ ու անհամար էր: Տեղից վերկեցողը քահանա էր դառնում: Յեվ ամեն մի քահանա իրեն իրավունք էր համարում իր իսկ կենդանություն ժամանակ իր վորդերանցը քահանայացնել և իր ծխերը իր կամքով՝ բաժանել նրանց մեջ կամ թե իր աղջիկների վրա ոճիտ տալ: Վոր քահանայի աղջիկը իբրեւ ոճիտ՝ շատ ծուխ ուներ, նա ել լավ փեսացու էր ճարում յեվ այդ փեսացուն ամուսնանալով՝ քահանա էր դառնում...

Հայ համայնքը իր հոգևոր կյանքում այնքան էր ստրկացել, վոր նա հոգևոր դասի ձեռին դարձել էր՝ ծախու ապրանք և զրավ ղնելու իր: Որինակ, յեթե քահանային դրամի պետություն էր լինում, նա հնարավորություն ուներ իր ծխից վորոշ թիվ զրավ ղնել փողատիրոջ մոտ և փոխարինարար դրամ վերցնել...

Իսկ ինչ էր անում այդ ժամանակ եջմիածնի բարձր իշխանությունը: Նա տեսնում էր այն բոլորը, ինչ վոր կատարվում էր թեկուզ հենց վիրահայ կյանքում: Նա, անշուշտ գիտեր և ընդունում էր այդ ամենը: Եջմիածնի վարչությունը իր ներքին, աթոռների կոնֆու ուներ: Նրան այնքան էլ չէր հետաքրքրում թե՛ ինչ կերպով և տարվում յեկեղեցական կյանքը գանազան տեղերում և վայրերում: Նա բավականանում էր միայն՝ նշանակելով առաջնորդներ յալիսկոպոսներից կամ ուղարկելով ժամանակ, ժամանակ նվիրակներ՝ Եջմիածնի անունով իրեր և դրամական նվերներ հավաքելու նպատակով:

Առաջնորդները հաճախ յենթարկվում էին ավագ-քահանաների կամքին և ցանկություններին և նրանց ընդունել-արձակելը՝ Թիֆլիսի քահանաների համար, շատ չնչին բան էր: Առաջնորդները, լավագույն դեպքում, հարմարվելով տեղական պայմաններին, աշխատում էին, վորքան կարելի է՝ շատ ուղղակի իրենց գրպանները և հարստություն դիզել. մի հարստություն, վորից վոչ Մայր-աթոռը ոգուտ ուներ և վոչ հայ ժողովուրդը. այլ՝ այն մարդիկ, վորոնք առաջնորդների հետ վրեժն ազգակցական կապերով մոտ յեն յեղել:

Նույն բանն էին անում եջմիածնից այլ և այլ վայրեր ուղարկված նվիրակները:

Այսպիսի գծերով լիքն է մեր անցյալ պատմությունը և նա այնքան խորն է նստել ժողովրդի ուղեղի մեջ, վոր շատ յերկար և շարունակվել և այդ գծերի վորոշ մասերը՝ դեռ ևս շատ ուժեղ նստած յեն մեր իսկ ժամանակներում:

Յեւ միթէ այդպես յերկար պետք է շարունակվեն այն մի շարք, իրենց ելույթամբ տգեղ և տարորինակ յերևույթները հայ հոգևոր աշխարհում, յերբ կյանքը իր զարգացմամբ և քաղաքակրթությամբ՝ ուժեղ քայլերով առաջ էր շարժվում:

Ինչպես արդեն նկատեցինք, հոգևոր կյանքի այդորինակ դրույթյան գոյություն ցանկալիությունը ցարական պետություն շահերին միանգամայն ձեռնադրել էր և նա ինքն էր աշխատում միշտ խավար միջնորդ ստեղծել, վորպեսզի կարողանա իր քաղաքական նպատակներին հաղորդ տալ:

Յեւ ուսական պետությունը Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի որով, վորը կաթողիկոսացավ կառավարություն ցանկությունամբ և ճշմամբ, վորպեսզի հայ յեկեղեցուց ամեն մի ազատ ձգտում վերացնե և իր ձեռքին դենք շինե նրան, ուրեմն և՛ ծառայեցն իր քաղաքական նպատակներին, 1836 թվին սահմանեց հայոցի «Պրոթենյան», վորով վերջնականապես ուս աշխարհիկ կառավարությունը հայ յեկեղեցին իր թաթերի մեջն առավ և նրան զրկեց ամեն մի փորձից, վորը կարող էր հայ յեկեղեցին ազատ և բարեկեցիկ վիճակ ստեղծելու գրություն մեջ դնել:

«Պրոթենյանով» ուսահայ յեկեղեցին դարձավ մի չինովնիկական զանգված, վոր իր կերտած սահմաններով նրա գրությունը վերածեց իրական պաշտոնականի, դարձրեց իր ձեռքում գենք և

բոլոր մարդկանց, վորոնք հայ յեկեղեցու բարեփոխությունն էին յերազում և ցանկանում, — ցարական կառավարությունը հայ յեկեղեցին կառավարելու համար հրատարակած որենքի ուժով, — ցանկությունների հանգամանքից դենը չը դրեց, վորի պատճառով էլ ամեն ինչ՝ ժամանակ առ ժամանակ պետք է պոթկար և յենթարկվելով լուծության, անժամանակ վոչնչանար:

Բարեփոխություն էին գոռում ամենքը: Ծրագրեր էին առաջարկվում ամեն կողմից և՛ ուրիշ վոչինչ:

Բարեփոխություն էր ցանկանում նույնիսկ Թիֆլիսի հայ քահանայական դասը 1905-ական թվականներին, յերբ Ռուսաստանի քաղաքական կյանքը ալեկոծվել էր և յերբ ամեն մի աշխատավոր՝ ճնշված տիրույթ ուժի մի ծանրությունից՝ ըմբոստացել էր և պահանջում էր բարեկեցիկ վիճակ:

Ինչ էր ցանկանում Թիֆլիսի քահանայական դասը:

Նա, անշուշտ, իրբն դասակարգ, հեղափոխականացած յերկրում, ամենից առաջ, իր վիճակը բարելավելու մասին պետք է մտածեր և ահա 1905-ական թվականներին, Գարեգին յապիսկոպոս Սաթուրյանի առաջնորդության որով, Թիֆլիսի քահանայությունը մի ծրագիր է ներկայացնում նրան, վորը այսպես է սկսվում:

«Տեսնելով, վոր ժողովրդի ամեն մի դասակարգությունը իր վիճակի ասպնովություն վրա է մտածում և ամեն մի ճիգ է դործ դնում բարելավելու, այլ և նույն ժողովուրդը այլևս չի հաճախում եկեղեցի և որինակատարությունից ժամանակ այլևս չի շահում, թեև լինում յեն րացառիկ դեպքեր՝ խիստ սակավ, սակայն միշտ կրում յենք որինակատարությունից ժամանակ ստանալի արդեանց վերաբերությամբ՝ վերին աստիճանի զրկանք և ամենազգվելի անպատվություններ, մեղանից շատերը ծանր պարտքի տակ տաղնապում յեն և շատերը վորորմություն մուրալու վիճակի յեն հասել. և այս իսկ պատճառով խնդրում յենք:

1. հաստատել քահանաներից և աշխարհականներից մի վարչություն, վոր վարչական զեկը իր ձեռքն առնելով՝ քահանաների ասին կերպ աշխատին նոր և պատվարեր արդյունքների աղբյուրներ գտնել և հսկել ընդհանուր կարգապահությունը:

2. Քաճանաներին բաժանել գաղափարներն՝ ուսուցիչներ, պաշտոնատար քաճանաներ և որինակատար քաճանաներ:

3 Մոմավաճառութեան արդյունքը ամբողջովին հատկացնել քաճանաներին:

4. Վերոջեղ որինակատարութեանց համար ստացվող արդյունքների չափը:

5. Բոլոր քաճանաներին ուճիկ նշանակել... և այլն»:

Իսկ դիմումի վերջում գրում են՝
«Յեզ վորովհետեւ այս միջոցներն ունին հաստատուն հիմունք՝ քաճանաներիս պատվավոր կերպով ուճիկ մատակարարելու և քաճանայական վիճակը բարելավելու և վերականգնելու, ուստի՝ խնդրում ենք միջնորդել մեր հոգևոր Բարձրագույն իշխանութեանը՝ հաստատել»:

Ունեցավ վերեւ հետևանք Թրֆլիսի քաճանայութեան այդ ծրագիր-դիմումը: Վորեւ հետևանք չեր եղ կարող ունենալ, յերբ քաճանայութեանը այդպիսի դիմում-ծրագիր մի ձեռքով ստորագրում եր, իսկ նրա մեջ շատ ծուխ ունեցող և ըարենկեցիկ վիճակ ապրողները՝ մյուս ձեռքով ջանում էին վոչնչացնել ամեն մի ծրագիր և գեղեցիկ սկզբունք, թողնելով միշտ հինը, խալարը և փտածը...

Ոգտվում էին քչերը, տուժում եր մեծամասնութիւնը և այդ մեծամասնութիւնը ավելի եր սարսափում, յերբ տեսնում եր վոր ժամանակակից հավատացյալը չի հարմարվում տիրող յեկեղեցական կարգերի ու կանոնների հետ և կամաց կամաց հեռանում ե նրանից:

Յեկեղեցիները դատարկվում էին ժողովրդից, վոչ մի հետաքրքրութիւն չէին շարժում նորա և յեթե կար մի բան, վոր կապում եր ժողովրդին, — դա ել՝ յեկեղեցու պաշտոնական հանգստանքն եր և ուրիշ վոչինչ:

Յեկավ մեծ հեղափոխութիւնը և ուսական յերկրում յերկու բովիւներ կանգնեցին մեկ մեկու դիմաց. մեկը հին կյանքն եր, վոր խորտակից և չբացավ, իսկ մյուսը՝ նոր կյանքը, վոր ոկսեց ծաղկել և զարգանալ: Ամեն ինչ կերպարանափոխվեց: Նոր սկզբունքները յեկան տակն ու վրա արին հինը և ինչ վոր լավ եր, պոկեցին, վերցրին նրանից, ցնացածը զեն ձգեցին, կորով:

Մեր յեկեղեցիս մի տխրութիւն աղատվեց կողմնակիցից: Նա այլևս կաշկանդված չեր պետական-քաղաքական նպատակներով: Նա թողնված եր իր կամքին:

Եջմիածնի Մայր-Աթոռը լուս եր և շարունակում եր յեկեղեցու վարումը դարձյալ «պոլոմենիայով»: Այդ սահմանադրութիւն ստեղծող պետութիւնը հոգս ցնդեց, բայց՝ հալ յեկեղեցու համար «պոլոմենիան» մուաց իր ետեւում: անձեռնմխելի:

Ջարմանալի բան ե, ինչ վոր մի անգամ ուղղակի կամ անուղղակի կերպով մուտք եր գործում մեր յեկեղեցու մեջ, այլևս գուրս չեր գալիս: Մեր յեկեղեցին դարձել եր կարգերի ու կանոնների մի խալաճամուկ ժողովածու:

Դարձյալ վրաստանում Թիֆլիսի քաճանայական դասը և մի քանի հասարակական գործիչներ 1917 թվականին հրադարակ հանեցին հայոց յեկեղեցու բարեփոխութեան ծրագիրը՝ ժողովներ գումարեցին նախկին Գալիսիայի դպրոցում, ձեռնեցին, խօսեցին, վորոշում հանեցին և ուղարկեցին Եջմիածին: Այնտեղ ել խնդրը քննութեան դրին, նոյնիսկ մարդիկ հրապրեցին այլ և այլ շքր-ջաններից. բայց՝ անպատկ յեղավ և ինչպե՛ս ամեն անգամ, այս անգամ ել հայոց յեկեղեցական բարեփոխութեան ծրագիրը սեղանի ծածկոցի տակ գրվեց և ջուրն ընկավ...

Աշխատհիկ կյանքը կառուցվում եր, կազմակերպվում: Յեկեղեցին իրրեւ ազատ և հավատացյալների գուրգուրանքի առարկա. նրա վարչութիւնն ել, պաշտամունքն ել՝ թաղնված եր նրանց հաւեցողութեանը:

Մեջտեղ եր գալիս հավատացյալը, քրիստոնյան և ջուկում, ոտարանում եր՝ հակոտակ մտածողը: Յեկեղեցին իր զոյալթյան լնթացքում՝ առաջին անգամ՝ միայն դրոկեց այնպիսի դրութիւն, մեջ, վոր պետք ե հրապարակ զար իսկական յեկազատ հաւեատացյալը, յեկեղեցու հարազատ տերը:

Մի այնպիսի փափուկ շքան եր սկսվել, յերբ մի փոքրիկ անհարազատութիւն հավատի բնագավառում, հավատացյալը կը տատանվեր և կը մեկուսանար:

Աշխարհիկ կյանքը դավում, կաղապարվում եր: Այնտեղ մուտք գործած անհարազատ տարրերը մեկուսացվում էին, իսկ մեզ մոտ, մեր հոգևոր ասպարեկում, ուր վաղուց պետք ե տիրեր հարազատութիւն, սեր յեկ միութիւն, լեւի լեցուն եր ամեն տեսակ անհարազատութեամբ, հին ու անպետքացած կտրվելով ու կանոններով:

Հավատացյալ անհաղ բարեփոխութիւն եր սպասում մեր յեկեղեցական ասպարեկում: Յեղածը նրան չեր բաւարարում: Նա կամենում եր, վոր սիրտ տուածու հետ իր կաղը հարազատ լինի, կենդանի յեկ պարզ լինի: Բայց՝ տեսնում եր միշտ հինը:

1921 թվականն էր: Մեղանում կյանքը նոր եր սկսել ծաղկել: Սպասում ենք յեկեղեցական կյանքի գարնան ծաղկունքն էլ տեսնել, չկա: Վրաստանի մայր քաղաքում, Թիֆլիսում, մի յեկեղեցական-բարենորոգչական փորձ է լինում: Քամոյան յեկեղեցում՝ մեր բխկով և ջանքերով մուտք ե գործում յերգեհոնի գործածութիւնը: Վոմանք սկսում են քննադատել, բայց տեսնում են, վոր լավ ե հնչում, դուր ե գալիս: Վեջ միայն գոհ ե հավատացյալ համայնքը, այլև շուտով որինակ են վերցնում Թիֆլիսի այլ և այլ յեկեղեցիները և շատ չանցած՝ ուսասիայ յեկեղեցում՝ Նջմիաժից սկսած՝ մտնում ե յերգեհոնի գործածութիւնը: Ինստիտուտաբար մեր յեկեղեցում մտնում ե մի արմատական բարեփոխութիւն — յերաժշտութիւն, վոր հոովմեական յեկեղեցուն եր միայն հատուկ:

Յերգեհոնի գործածութիւնը ուսասիայ յեկեղեցում առաջին քայլն էր, վոր իր բարեբար ազդեցութիւնը ունեցավ:

Վոգեվորված այդ հաջողութիւնից, մենք քաջ գիտենալով, վոր մեր յեկեղեցում հրատապ կերպով պահանջ ե զգացվում մի շարք՝ տեղական նշանակութիւն ունեցող բարեփոխութիւնների, նույն 1921 թվի դեկտեմբերի 20-ին մի գրութիւն ուղղեցինք Վրաստանի առաջնորդ՝ Գեվորգ յեպիսկոպոս Զորեքչյանին, վորի բովանդակութեան ետեւն մասերը ավելորդ չենք համարում բերել այստեղ:

«Տարիների ընթացքում յես հետեւելով մեր հոգեւոր կյանքին և այն պայմաններին, վորոնցով տարվում ե քրիստոնեական վարդապետութիւնը, — գտել յեմ, վոր հառաջագիւղութեան վոչ մի կերպարանք չը ցույց տալուց բացի, նա չափազանց արագ քայլերով գնում ե դեպի խորխորատ և մեր կյանքում շատ են նորա, վորոնք ուրախանում յեն այդ յերեւոյթով և աշխատում, վորքան կարելի ե, աջակցել և խրախուսել՝ հիշյալ գրութիւնը:»

«...Յեթե հետեւելու լինենք ավետարանի վոգուն և սկզբունքին, պետք ե ընդունենք, վոր հոգեւոր կոչում ստացող անձինք իրենց կյանքի գործելակերպով պարտավոր յեն ցուցադրել հավատացյալ համայնքին՝ Քրիստոսի վարդապետութեան հիմնական սկզբունքների պատկերը: Նորա իբրեւ հոգեւոր կյանքի ներկայացուցիչներ, պետք ե շատ և շատ բաներով բարձր լինեն աշխարհի կյանքից և մարմնացյալ տիպարը լինելով բարոյականութեան և սիրո, — պետք ե

հասարակութեանը տանեն դեպի ճշմարիտ սիրո և հավասարութեան ուղին: Չե վոր քրիստոնյական վարդապետութիւնը իբրեւ գաղափարական մի ուսմունք, պետք ե նրա զրոշակակիրները ըստ ամենայնի գնահատեն նրան և ըստ այնմ հրապարակ գան հասարակութեան մեջ: Ապա թե վոչ, յերբ իրենք բարոյապես ավելի ցած յեն կանգնած հասարակութիւնից և իրենց քարոզած վարդապետութեան սկզբունքները ամենից շատ խորթ յեն իրենց իսկ ներքին կյանքի համար, հապա ի՞նչպիսի դրութիւն կարող ե ստեղծվել յեկեղեցու, այդ հոգեւոր բնակավայրի, և նրա հավատացյալներին միջև:

«Յեմ միշտ հավատացած եմ յեղել, վոր հայաստանյայց յեկեղեցին մեր ընթացիկ կյանքի մեջ մեծ դեր ե ունեցել կատարելու և հոգեւոր իշխանութիւնը կոչված ե յեղել արթուն կերպով հսկելու և տոն տալու այդ կյանքին, սակայն, դժբաղդաբար, նրա պիտքը շատ և շատ քննադատելի ե յերևում, յերբ մեր աչքերի և մտքերի առաջ՝ ցցվում ե մեր արդի իրական հոգեւոր կյանքը:

«...Մեր հոգեւորականութիւնը վրաստանում, ուր դուք պաշտոն ունիք իբրեւ թեմական առաջնորդ, միանգամայն իրեն անհամապատասխան դերումն և գտնվում և շնորհիվ այդ բանի, ժողովրդի սառնութիւնը դեպի յեկեղեցին և հոգեւոր դասը, որ ավելորդ սուր կերպարանք ե ստանում: «...Գոնե Թիֆլիսի պես քաղաքում, ուր մտավոր կենտրոնատեղի ե և այդ հանգամանքում մեր յեկեղեցին պետք ե ունենար կրթված և գաղափարական հոգեւորականութիւն, սակայն չկա: Յեղած մի քանիսն էլ՝ խառնվելով ընդհանուր հոսանքին, կուլ յեն գնացել և իրենց շնորքն ու յեռանդը գործ յեն գնում, համենայն դեպս: Վոչ իրենց հոգեւոր կոչմանը: Բայց թե ինչո՞ւ համար այսպիսի քաղաքում 3—4 տասնյակ այդպիսի քահանաներ յեն հաստատվել, սրա պատասխանատվութիւնը անշուշտ, կընկնի հոգեւոր իշխանութեան վրա:

«...Մեր բոլոր յեկեղեցիներում շահամուլութիւնը, խռովարարութիւնն ու կեղեքումը որենք յեն դարձրել քահանաները: Յեթե որինակատարութիւն ե լինում, ըստ ընդունված սխալ տրադիցիայի, դրամական վարձատրութիւնը ամենքի համար, թե իրեն, թե յեկեղեցուն և թե մյուս պաշ-

առնյալներին՝ ստանում են ծխից քանանան, սակայն ստացածի չնչին մասն է գնում ըստ պատկանելույն, վորովհետև՝ քանանան ստացած յեկամուտը նախ խուզում է և ապա՝ չնչին գումար շարտում է մնացած պաշտոնյաներին ու յեկեղեցուն։ Բացառություններ, անշուշտ, կան։ Յեվ անա այս հանգամանքը լուրջ առիթ է ծառայում յեկեղեցու ներքին խռովությունների»։

«Այժմ լինչ պետք է անել։ Յեթե մեզ համար ցանկալի չէ, վոր հոգևոր վյանքը գնա իր խեղճան, մարտը ուղիով, ուրեմն պետք է այդ ցավերը արմատապես վերացնել, յեթե վոչ, ահնբե և ընդհանուր քայքայումն մեր հոգևոր կյանքի։

«Ինչ թվում է թե՛ յուրաքանչյուր գաղափար կյանքի մեջ կը կիրառվի այն ժամանակ միայն, յերբ նրա հիմքում տեղի ունեցող խաչնդոտները վերացվեն։ Մանավանդ այդ բանը պետք է անել այժմ, յերբ մարդկությունը ապրում է այնպիսի անցքեր, վորոնք արամադիր յեն ամենակատաղի կախվ մղիլ հոգևոր վարդապետության գեմ։ Յեվ նորա, անշուշտ, կը հաջողեն, յեթե մեր հոգևորականությունը շարքերը չը մարքենք՝ անարժան և իրենց պարտականությունը ի չարը գործ գնող հոգևորականներից և, գուցե մացարար, մեր յեկեղեցին չը գնենք՝ իր կոչման բարձրության վրա։ Արդյոք մի չի տեսնում այն գեղեցիկ գործը, վոր կատարվում է մեր աշխարհիկ կառավարության շարքերում։ Մենք ամենայն որ տեղանա տեղ յենք յերեւելիքների, յերբ ամենապաշտամբանապետ պետական գործիչներ և պաշտոնյանք՝ իրենց պարտականությունը թերի և անվայելուչ կատարելու պատճառով՝ յենթարկվում յեն դատի և արտաքսման։ Իսկ լինչ է անում մեր հոգևոր իշխանությունը՝ հանդեպ հանապազարեա կատարվող այն աններելի պակասությունների, վորոնցով լեցուն է մեր հոգևորականությունը։ Այժմ ավելի, քան մի ուրիշ ժամանակ, հոգևոր իշխանությունը անհողհող պետք է լինի և իր շարքերից գուրա շարտի այն անարժաններին, վորոնք իրենց որինակով թունավորում յեն գեղեցիկ վարդապետության սկզբունքը և՛ ստանեցնում նրա հիմքերը։

«Յեթե հոգևոր իշխանությունը յեկեղեցու պաշտոնյաների ապահովության մասին ունեցիկ է վորոշ տեսակեա և այդ տեսակեաը՝ գրություն ցուցմամբ՝ նկատվում է սխալ և առիթ ծառայում մեր քանանաների և այլ յեկեղեցական

պաշտոնյաների համար՝ շահամուրթյան, խռովարարության և կեղեքումի, ապա ուրեմն, այդ գրությունը ընդօրոյթ պետք է փոխել։

«Մինչև հիմա հոգևոր պաշտոնեությունը իր արած որինակատարությունների համար վարձատրվում է ժողովրդից՝ ըստ կամս ծխի և այդ անվորոշությունը իր հետևանքով՝ փաստում է յեկեղեցու կոչմանն ու գաղափարին։ Այժմ պետք է վերջ տալ այդ ձևը և անպայմանորեն՝ պետք է մտցնել քահանայության և մյուս պաշտոնյաների համար՝ ու ճկի սխտեմը, համաձայնեցնելով այդ՝ կյանքի պահանջներին։ Որինակատարությունների համար պետք է սահմանել, ըստ կատեղորաների՝ վորոշ չափ և գանձել այն՝ հոգաբարձություն, կամ՝ հոգևոր իշխանություն միջոցով։ Իսկ քահանան, իրեն յեկեղեցու պաշտոնեա, պետք է պարտավորվի կատարել որեւոր և ծխի հետ վնչ մի գրամական հաշիվ չունենա... Պետք է ձեռք առնել միջոցներ՝ հոյ համայնքի վրա, ըստ կարողության, ծխական տուրք նշանակիլ և ստանալ, վորը, որինակատարություններից ստանալիք վորոշված արդյունքի հետ՝ կը կազմի ֆոնդ՝ հատուցանելու համար յեկեղեցական պաշտոնյաների թոշակները և հոգալու համար՝ յեկեղեցական և առաջնորդական այլևայլ ծախքերը։

«Այս խնդիրը այնքան այժմեական է, վոր յերբեք չի կարելի դանդաղել, քանի վոր դա ըղիւում է ժամանակի հրամայողական պահանջից և հնարավորություն և ստեղծում՝ ամենամեծ չափով վերացնելու մեր յեկեղեցական կյանքում գոյություն ունեցող աններելի պակասությունները։

«...Մենք վստահ յենք, վոր գուր վերը բերած նկատողությունները ի նկատ առնելով, կստեղծեն այն ցանկալի միջոցները, վորոնցով հնարավոր կը լինի վերացնել մեր յեկեղեցական կյանքից բացասական յերեւելիքները և այդպիսով հիմնական նորոգություն կը մտցնեք այդ կյանքում՝ յեկեղեցին դարձելով ճշմարիտ խորանը բրիտանություն և նրա պաշտոնությունը՝ ու շեղ և անրիժ կատարողը այդ վարդապետության»։

Արդյոք ունեցնով իր նշանակությունը մեր վերոհիշյալ առաջարկությունը։ Կասենք այո, վորովհետև վստա է, վոր Չորեքշաբթի առաջնորդի վարած բոլոր գործերը կապված են հոյ յեկեղեցու բարեփոխության սկզբունքի հետ և իրեն կենդանի ապա-

ցույց այդ բանին, նրա մի շարք առաջարկութիւններն եյին 1925 թվականի հոկտեմբերի 4-ից Թիֆլիսում գումարված թեմական պատգամավորական ժողովում, վորոնք բոլորն էլ ընդունվեցին և վորոշվեցին՝ անցկացնել կյանքի մեջ:

Այդ թեմական պատգամավորական ժողովը վիրահայ հոգևոր կյանքում իր յիգակի տեղն ունի: Նա յեզակի և այն նշանակութեամբ, վոր նրա որակարգը գրեթե կազմված էր ամբողջովին բարենորոգչական խնդիրներէից:

Այնտեղ կարգացվեցին և ընդունվեցին մի շարք բարենորոգչական՝ առաջարկութիւններ և այդ առաջարկութիւններից մենք մեջտեղ կը բերենք միայն Թիֆլիսի հայ քահանայութեան առաջարկութիւնները յեկեղեցական բարեփոխութեան խնդրում, վորի իսկական բովանդակութիւնը հետեւին և:

«Հայոց ազգային ազատ ինքնուրույն յեկեղեցու բարեփոխութեան հարցը շատ հին և և նրա հարադատ դավաններէից շատերը զբաղվել են այդ խնդրով: Սակայն յերկար ժամանակ գանգիւղ գարական բեթիմի ներքո, անկարող յեզով իրրե ինքնուրույն ազատ յեկեղեցի հանդես գալ և վերջին հեղափոխական հոսանքի առաջ ցույց տալ, վոր նա ժողովրդական և և պետք և վերադառնա իր նախկին ազատ վիճակին: Յավոք սրտի պիտի ասել, վոր միւրոնք թեւոյցան իր ժամանակին այդ ընթացքը բռնել, պաշտպանել և հեղափոխական հոսանքի առաջ ցուցադրել նրա ազատ վոգին: Ուստի պետութիւնից ճանաչվեց այնպէս, ինչպէս կաթոլիկ և հունական յեկեղեցիները՝ իրա միահեծան, բռնակալական դիրքով:

«Ասդ, ժամանակ և, վոր հայոց յեկեղեցին՝ ժողովուրդը և հոգևորականութիւնը, ձեռք ձեռքի տված՝ վերաշինեն, կենդանացնեն նրան: Այդպիսով նրա բարեկարգութեան հարցը հերթական է: Ժամանակն և բարեփոխութեան յենթարկել նրա վարչական-գաղափարական, թե կրոնական և թե ծիսական ժամասացութեան կարգը: Մեր կարծիքով, վորքան շուտ կատարվի այդ բարեփոխութիւնը, այնքան լավ, վորովհետեւ այդ բարեփոխութեամբ նա ընդունակ կը լինի շատերի սրտերը կապել իր պարզ, մաքուր ու ժողովրդական սկզբունքների հետ:

«Այդ նպատակով Թիֆլիսի հայ քահանայական միութիւնը իր ցանկութիւնների և իղձերի ցանկը ներկայացնելով թեմական պատգամավորական ժողովից, խնդրում է՝ քննութեան յենթարկելուց հետո ձգտել նրան կիրառելու կյանքի մեջ: Ձեր և հոգևոր ծայրագուն իշխանութեան միջոցով:

«1. Վերականգնել հայ յեկեղեցու առաքելական պարզութիւնը կենդանի խոսքի միջոցով:

2. Ազատել յեկեղեցին վորոշ դասակարգային իշխանութիւնից և վերահաստատել առաքելական ժամանակվա լայն ժողովրդական ընտրողական վարչաձև:

3. Ժողովրդին անհասկանալի գրաբառ լեզվի փոխարեն, յեկեղեցիներում մտցնել կենդանի և ամենքին հասկանալի աշխարհաբառ լեզուն:

4. Վերացնել հոգևորականի և աշխարհականի միջի յիղած տարադիր տարրերութիւնը:

5. Քահանայի և հավատացյալ աշխարհականի առաջ պետք և բաց լինեն յեկեղեցու նվիրապետութեան բոլոր տատխճաններն ու պաշտոնները, նույնիսկ՝ կաթողիկոսութիւնը:

6. Կարևոր և անհրաժեշտ և ունենալ հայոց յեկեղեցու որենսզիրքը:

7. Միջնորդել ՆՃմիածնի առաջ՝ կարճ ժամանակում գումարել ազգային-կրոնական ժողով:

8. Ապագային կրթված հոգևորականներ ունենալու համար անհրաժեշտ է մի հոգևոր դպրոց ունենալ այստեղ կամ արտասահմանում:

9. Յեկեղեցին մաքրել ավելորդապաշտութիւններից, սնտոխապաշտութիւններից և հեթանոսական փրասակար պաշտամունքներից:

10. Վերացնել ամենուրեք ժամասացութիւնը և նրա փոխարեն կատարել շարաթ յերեկոները, կիրակի ու տոն օրերը:

11. Լուրջ ուշադրութիւն դարձնել հոգևորականութեան բարոյական ու մտավոր մակարդակը բարձրացնել և մաքրել նրա շարքերը:

12. Խիստ պահպանել քահանայական ցենզի խնդիրը — քաղաքներում միջնակարգ դպրոցի, իսկ գյուղերում առնվազն՝ չորսդասարանյան:

1119-84

13. Կրճատել թիֆլիսի յեկեղեցիներէ թիփը և նրան սպասափողներէ շտառը:

14. Յեկեղեցին վառ ու կենդանի պահելու համար պահել շրջիկ քարողիչներ և յերգեցիկ խմբեր:

15. Սկսած կապ ստեղծելու համար քահանայի և նրա հավատացյալ հօտի մեջ, պետք և վերացնել նրա հասույթի ստացման արդի տգեղ և անպատկարք ձևը ավելի պատկարհեր և ժամանակակից մի նոր ձևի, ռոնիկ և զանազան արհեստագործութեաններէ ստանալիք տուրքը պետք և զանձլի միմիայն ծխական խորհուրդներէ միջոցով:

16. Թիֆլիսի բոլոր յեկեղեցիներում ժամերգութեանն սկսել միաժամանակ և կատարել միատեսակ:

17. Շատ գլուղեր քահանաներ չունին և հավատացյալ համայնքը մնացել և առանց քահանայի, տալ նրանց արժանավոր հովիւներ:

18. Վերջին կրոնական հալածանքի ժամանակ շատ քահանաներ թողին իրենց ծուխը, գերազանցելով պահել իրենց կալվածքները՝ քահանա մնալով, շատ քահանաներ ևլ հրաժարվեցին, շատերն ևլ լրեցին իրանց ծխերը, թափառում են թիֆլիսում և զազանի քահանայադոմ են. ալլախինս իրապա հեռացնել քահանայական կոչումից:

19. Տոմարի խնդիրը:

Թեմական առաջնորդի իրավասուրյան սահմանը:

«1. Թեմերը կառավարում են ժողովրդից բնարված առաջնորդները թեմական խորհուրդների հետ միասին: Նա միահեծան իշխանավոր չեն. խորհրդի վորոշումից հետո միայն դործին ընթացք պետք և տրվի:

2. Առաջնորդը ընտրելիս պետք և անպատճառ հրապարակի վրա գրվեն մի քանի թեկնածուների անուններ. մեկ թեկնածուով յերբեր ընտրութեան չը կայացնել:

3. Նա բացի իր ուժիկից՝ վանքերի, ուխտատեղիների և մամալաճառութեան արդյունքներից ստանալու իրավունք չունի:

4. Նա անշարժ չպետք և նոտի թիֆլիսում, այլ հավատացյալ ժողովրդին գրավելու և յեկեղեցու հետ սերտ կապելու համար անհրաժեշտ և, վոր նա ալլախին զանազան յեկեղեցիներ, պատարագ մատուցանի և քարոզ խոսի, շրջի

թեմը՝ ծանոթանալու նրա հողեր և կրոնական կարիքների հետ: Ներքին խնդիրներում ամեն մի համայնք իր ծխական խորհուրդներով անկախ և զործում. նա չպետք յենթարկվի թեմական խորհրդի սխալ միահեծան վորոշումներին:

5. Նոր քահանաներ ձեռնադրելիս պետք և շատ զգուշ լինել՝ տղետներն և ապկաղներին տեղ չտալ:

6. Քահանաների օլարեկատրութեանը պետք և տեղի ունենա ծխական խորհուրդների, քահանայական սիութեան գիտութեամբ և համաձայնութեամբ:

7. Առանց ծխական խորհուրդների ու ծխական ընդհանուր ժողովի գիտութեան, վոր մի քահանա չպետք և ձեռնադրվի:

8. Այսպես ևլ նրա անմիջական իրավունքը չեն քահանաներին մի տեղից մյուս տեղը փոխադրել:

Նախագահ ընդհանուր ժողովի՝ Գալուստ ավ. ք. Աբուլյան
Քարտուղար՝ Իսվորք ավ. ք. Մեհրաբեյան
Թիֆլիս, 2 հոկտ. 1925 թ.

Թեմական պատգամավորական ժողովը ամբողջովին ընդունեց Թիֆլիսի քահանայութեան վերահիշյալ առաջարկութեանները և վորոշեց՝ նրանցից աչն կետերը, վորոնք տեղական բնութ ունին, իսկուն անցկացնել կյանքի մեջ. իսկ աչն կետերը, վորոնք ընդհանուր յեկեղեցական ընտրութեանն ունեն՝ թողնել լուծելու համազգային յեկեղեցական ընդհանուր ժողովին, վորպիսին 1926 թ վականին գումարելու համար՝ միջնորդութեան հարուցանել ամենաչն հոյեց հայրապետի մոտ:

Իսկ տեղական բնութ ունեցող խնդիրները, վորոնք բացի Թիֆլիսի քահանայական միութեանից՝ առաջարկվել ելին նաև ինչպես Այդերքյան առաջնորդի, աչնպես և ուրիշների կողմից, միացնելու և կյանքի մեջ կիրառելու համար, նույն պատգամավորական ժողովը իր միջից ընտրեց մի մարմին յերբ հողուց, վորը հարկավոր ժամանակ, իր կազմը պետք և ուժեղացնել՝ ալլախին մասնագետներից՝ խորհրդակցական ձաչն իրավունքով:

Պատգամավորական ժողովից ընտրված մարմինը, վոր անվանվեց «Հատուկ կոմիտիս», լուրջ պարտականութեան ևր վեր-

ցրել իր վրա և նա իր աշխատութեան արդյունքով, անշուշտ, Վրաստանի հայ յեկեղեցու համար՝ մի նոր արշալույս պետք է բանար:

Յեւ վաղ արշալույսի պատիվը պատկանում էր Թիֆլիսի հայ քահանայութեանը թե՛ տեղական բարենորոգչական բնույթ ունեցող խնդիրների լուծմամբ և թե՛, մանավանդ, այն խնդիրների դասավորութեամբ և քննութեամբ, վորոնց վերջնական լուծումը պետք է տար համազգային կամ համամիութենական յեկեղեցական ընդհանուր ժողովը:

Այսպիսով, մեր յեկեղեցական իրականութեան մեջ կտրուկ և ամփոփ բարենորոգութեան ծրագիր առաջարկողը Թիֆլիսի հայ քահանայութեանն էր:

Վորոնք էին նրանց առաջարկած՝ տեղական բնույթ ունեցող և անմիջապէս կյանքի մեջ անցկացնելիք բարենորոգութեանները:

1. Կենդանի խոսքը — քարոզը,
2. Հոգևորականութեան բարոյականի բարձրացումը,
3. Նրա միջից անարժաններին հեռացնելը,
4. Հոգևոր դպրոց բանալը,
5. Քահանաների ցննդը,
6. Թիֆլիսի յեկեղեցիների թվի կրճատումը,
7. Քահանաների քանակի կրճատումը,
8. Շրջիկ քարոզիչներ ունենալը,
9. Յերգեցիկ խմբեր պահելը,
10. Ռոճիկ սահմանելը քահանաների և այլ պաշտոնյաների համար,
11. Արդյունքների գանձումը՝ յեկեղեցական խորհուրդների միջոցով,

12. Ժամասացութեան միորինակութեանը և այլն:

Յեւ վորոնք էին ընդհանուր բնույթ ունեցող բարենորոգութեանները, վորոնք պետք է անցկացվին համազգային կամ համամիութենական յեկեղեցական ժողովի բովից:

1. Յեկեղեցին ազատել վորոշ դասակարգի — կուսակրոնների իշխանութունից և վերահաստատել լայն ժողովրդական ընտրողական վարչաձև:

2. Աշխարհարար լեզվի գործածումը յեկեղեցիներում՝ գրարարի փոխարեն:

3. Վերացնել հոգևորականի և աշխարհականի միջև յեղած տարադի տարբերութեանը:

4. Քահանայի և աշխարհականի առաջ բաց անել յեկեղեցու նվիրապետութեան բոլոր աստիճաններն ու պաշտոնները, նույն իսկ կաթողիկոսութեանը:

5. Հայ յեկեղեցու որոնսգրքի կարևորութեանը:

6. Յեկեղեցու մարբումը ավելորդապաշտութեաններից, սնտիապաշտութեաններից և հեթանոսական փնասակար պաշտամունքներից:

7. Ամենորոյա ժամասացութեան վերացնելը և այլն:

Այս խնդիրները ամփոփող և կիրառող «Հատուկ կոմիտիան», վորի անդամներից մեկը առաջին իսկ ժողովներից հրաժարվեց գործելուց, մոտ չորս ամիս աշխատանք դրեց: Նա իր կազմը ու ժեղացրեց նոր և գործին տեղյակ անձնավորութեաններից, սակայն մի փոքրիկ և աննշան խնդրի պատճառով, վորը ուներ միմիայն անձնական-ձեռական բնույթ և վորի վորոքողն ու լայնացնողը, դժբաղդաբար, մի քահանա էր, — տուժեց գեղեցիկ և լուրջ գործը և կիսատ ճանապարհին վիժեց:

Լիակատար և խորհրդակցական ձայնի իրավունքի անորոշ խնդրը անդամներին մեկիկ — մեկիկ հեռացրեց ասպարեղից և յեղավ վայրկյան, վոր թվում էր, թե՛ ահազին աշխատանքները իզուր են անցնելու և մեր թշվառ յեկեղեցին դարձյալ պետք է մնա իր փլվող և անշուք վիճակի մեջ:

Ժամանակը և ուշի ուշով հետևող մի խումբ յեկեղեցական ասպարեղում գործող անհատներ չթողին, վոր՝ վերին աստիճանի այժմեական բնույթ ունեցող աշխատանքները ամլութեան դատապարտվին: Յեւ ահա «Հատուկ կոմիտիայի» փաստորեն լուծվելուց մի շարաթ չանցած, 1926 թ. ապրիլի սկզբներին, մեր նախաձեռնութեամբ, մեկը մյուսի հետևից կայացան՝ ինչպես յեկեղեցական խորհուրդների, այնպես էլ՝ հավատացյալ ազոթողների ընդհանուր ժողովներ Թիֆլիսի յեկեղեցիներում, կարդացվեցին յեկեղեցական բարեփոխութեան շուրջը զեկուցումներ, յեղան մըտքերի կենդանի փոխանակութեաններ, կազմվեց, ընդունվեց և վորոշվեց կառավարութեան համապատասխան մարմնի կողմից հաստատել մի կանոնադրութեան, ընտրվեց 7 հոգուց բաղկացած վարչութեան և պարտավորութեան դրվեց այդ վարչութեան վրա՝ կյսար և մարմին տալ առաջարկված կանոնադրութեանը, վորի բովանդակութեանը մենք բառացի կերպով բերում ենք այստեղ:

ա. Ն ալ ա ս ա կ

1. Թիֆլիսի հայ յեկեղեցական յեղբայրությունը նպատակ ունի՝ տեղական յեկեղեցիների նկատմամբ իրականացնել հետևյալ բարեփոխական ծրագրերը:

ա. յեկեղեցին գնել աշխարհի գրության մեջ, վոր մոտենա առաքելական պարզության և հավատացյալ համայնքը աշխարհից լսել պարբերական քարոզներ՝ հասկանալի բարբառով:

բ. Հեռացնել աշխարհից աշխարհի կարգերը, վորոնք մնացել յեն տիրապետող բռնակալական բեժիմներից և չեն համապատասխանում ժամանակի փոփոխության և հայ ժողովրդական յեկեղեցու պաշտարանին:

գ. Վերացնել յեկեղեցական դասի պաշտոնեյության համար ստացվող յեկամուտի հին ձևը և սահմանել պարզ և պատվարներ ձև:

դ. Ընդհանրացնել և տարածել հավատացյալ ժողովրդի մեջ՝ բրիստոսաշունչ յեկեղեցական գիտելիքները՝ նրանց գիտակից բրիստոսեան դարձնելու համար և

յե. յեկեղեցական աստվածաշունչությունը և յերգեցողությունը աշխարհի հիմքերի վրա գնել, վոր հավատացյալ համայնքը հոգեկան բավականություն ունանա:

2. Իր այս նպատակները իրականացնելու համար՝ Թիֆլիսի յեկեղեցական յեղբայրությունը՝

ա. կազմակերպում և կրոնաբարոյական բովանդակությամբ դասախոսություններ, դասընթացներ, գրույցներ և՛ հոգևոր համերգներ:

բ. Որևնքի թույլտվությամբ հրատարակում և իր թերթը և կրոնագիտական բրոշյուրներ, գրքեր, քարտեզներ, ավետարան, տաղարան և այլն:

գ. Կառավարում և յեկեղեցիների դույքը և այլ մասին պայման և կնքում կառավարության համապատասխան որգանների հետ:

դ. Մասնակցում և կրոնական բնույթ ունեցող համագումարներին և ժողովներին:

յե. Պահում և շրջիկ քարոզիչ՝ յեկեղեցիներում պարբերաբար քարոզներ տալու համար և պահում և յեկեղեցական յերգելիքի խմբեր:

զ. Նյութապես և բարոյապես ոգնում և յեկեղեցական պաշտոնյաներին և նրանց բնտանիքներին:

ե. Հավատացյալ համայնքի վրա՝ ըստ կատեգորյաների, նշանակում և դանձում և ծխական տուրք և

ը. Բոլոր յեկեղեցական պաշտոնյաների համար կիրառում և ոռձկի սխտեմը:

բ. Կ ա ղ մ

3. Թիֆլիսի հայ յեկեղեցական յեղբայրության անդամներն յեն՝ բոլոր յեկեղեցիների ծխական խորհուրդները, հանձինս իրենց անդամների և սույն ծրագրին համակրող և իրականացման համար աշխատել ցանկացող ամեն մի անձ:

Ծանոթություն. Յեղբայրության անդամների թիվը սահմանափակված չէ:

4. Յեկեղեցական յեղբայրության անդամները ընդունվում և հեռացվում յեն ընդհանուր ժողովների վորոշումով: Ընդունելու համար հարկավոր և ձայների պարզ առավելությունը, իսկ հեռացնելու համար $\frac{2}{3}$ -ը:

5. Ամեն մի անդամ կարող և հոժարակամ հեռանալ, այդ մասին համապատասխան հայտարարություն տալով վարչությանը:

6. Թիֆլիսի հայ յեկեղեցական յեղբայրությունը բացարձակապես անկոտրակցական է:

գ. Մ ի ջ ո ղ ն ե ռ

7. Թիֆլիսի հայ յեկեղեցական յեղբայրության դրամական միջոցներն յեն՝

ա. անդամակցական վճարները,

բ. կամավոր նվերները դրամով և իրերով,

գ. ծխական տուրքերը,

դ. գերեզմանատներից ստացվող արգյունքները,

յե. համերգներից և դասախոսություններից ստացվող արդյունքները:

դ. Գործերի կառավարություն

8. Թիֆլիսի հայ յեկեղեցական յեղբայրության բարձրագույն մարմինն և ընդհանուր ժողովը, վոր յեղբայրության նպատակի և պաշտամունքին վերաբերյալ գործերը վարելու և նույն խնդիրների վերաբերյալ ընդհանուր ժողովի վճիռներն ու հրահանգները ի կատար ածելու համար ընտրում և մի տարի ժամանակով՝

ա. վարչություն 5 անդամից և 2 անձնափոխանորդից,

բ. վերատուգիչ հանձնաժողով 3 անգամից և 1 անձնափոխանորդից:

Ծանոթություն՝ Սրանց ցուցակը ներկայացվում է տեղգործ կոմիտեի տեղեկություն:

գ. Յեղրայրությունը ունի իր կնիքը «Թիֆլիսի հայ լեկեղեցական յեղրայրություն» վերադրված:

յե. Ընդհանուր ժողով

10. Ընդհանուր ժողովներն որինական յեն, յեթե ներկա յեն անդամների կիսից ավելին: Բոլոր խնդիրները վճռվում յեն բաց քվեարկությամբ և ձայների պարզ մեծամասնությամբ բացի՝ ա. յ'ղրայրության փակման, բ. ներկա կանոնադրության փոփոխման և գ. անդամների հեռացման հարցերը, վորոնք պահանջում յեն ձայների $\frac{2}{3}$ մեծամասնությունը:

11. Յեթե առաջին անգամ ընդհանուր ժողովը չը կայանա, հրավիրվում յե նույն խնդիրները բնակչու համար յերկրորդ ընդհանուր ժողով, վորն որինական և, առանց հաշվի առնելու, թե քանի անգամ և ներկա գտնվում:

զ. Կանոնադրության փոփոխումը

12. Ներկա կանոնադրության կետերը ընդհանուր ժողովի կողմից կարող յեն փոփոխության յենթարկվել: Փոփոխված կանոնադրությունը ուժի մեջ և մտնում համապատասխան պաշտոնական մարմնի հաստատությունից հետո:

ե. Լ ի կ վ ի դ ա ց ի ա

13. Թիֆլիսի հայ լեկեղեցական յեղրայրությունը կարող և փակվել ա. կառավարության համապատասխան որդանների կարգադրությամբ և բ. ընդհանուր ժողովի վորոշմամբ:

14. Յեղրայրության փակման դեպքում, կառավարությունից ոգտագործելու պայմանով ստացված գույքը լիովին վերադարձվում է պետական համապատասխան մարմնին, իսկ մնացած գույքը և միջոցները կենթարկվեն ընդհանուր ժողովի վորոշմանը: Սույն կանոնադրությունը հաստատված է յեղրայրության 1926 թ. ապրիլի 27-ի ընդհանուր ժողովից և գրանցման և յենթարկված Թիֆլիսի յեղրայրության 1926 թ. մայիսի 11-ին 1405 համարով:

Այս հաստատված կանոնադրությունից պետնում և ընթերցողը, վոր աշխտեղ մտել յեն միայն այն բարեփոխական կետերը,

վորոնք ընդունված յեն վիրահայ թեմական պատգամավորական ժողովի կողմից և նույնիսկ՝ հաստատված ամենայն հայոց կաթողիկոսի կողմից, իրե արձանագրական վորոշումներ:

Այդ կանոնադրության ամեն մի յողվածը հրամայողարար պահանջում է՝ կիրառվել կյանքի մեջ, վորովհետև մեր յեկեղեցին շուքից վերջնականապես ընկել և, ժողովուրդը նրանից հեռացել: Ինչ վոր թոյլատրելի եր յերեկ և առաջի որը, այսօր անթույլատրելի է: Մինչև հիմա յեկեղեցին պետություն հետ ևր կապված և կրում ևր պաշտոնական հանգամանք: Ամեն մի հայ յերեկ պարտավորարար, պետք և աշխտեղ մկրտվել, պսակվել և յեկեղեցական ծիսով ել թաղվել: Նույնպես ել ժողովուրդը յերեկ պարտավորարար պետք է մտնել յեկեղեցի, աշխտեղ լսելու դպիրների և քահանաների ժանդոտած ձայները (բացառություններ կան), մեքենայարար աղոթք մրմնջար, առանց իմաստը հասկանալու, և յերեսը խաչ հանելով, իր «քրիստոնեական» պարտքը կատարած՝ գնար իր գործին: Ավելին պահանջելու իրավունք և հնարավորություն չունեն:

Այդ յերեկ եր, պետությունից կաշկանդված յեկեղեցում:

Այլ և այժմյան յեկեղեցին և հավատացյալի պահանջը: Թվում և, թե այժմ յեկեղեցի է մտնում, բացառարար, հավատացյալ անհատը: Յեվ նա յեկեղեցի է մտնում խոսելու և լսելու իր աստծուն, աշխարհի վրկչին: Նա յեկեղեցու բեմի վրա ուզում է տեսնել վերամկրտված, վերակենդանացած քահանային, քարոզչին, վորը ամեն ինչով բարձր լինի հասարակ մահկանացուից և վորը հավատացյալ յեղորր, տաճարի բեմից սեր և բարոյականություն քարոզե, ուրիշ խոսքով՝ իր ասարած մարտը կյանքը պատմի: Այո, ժամանակակից հոգևորականը միայն ծխակատար չպետք և լինի: Նա պետք է ներկայանա՝ իրենով մարմնացած տիպարը սիրո յեվ բարոյականություն:

Ժամանակակից հավատացյալը յեկեղեցուց և նրա ղեկավարներից պահանջում է՝ պարզ և հասկանալի ծխական արարողություններից բացի՝ ներդաշնակ և գեղեցիկ յերգեցողություն, սիրտը հուզող և գույթ ու կարեկցություն շարժող, ներդաշնակ յերգ և յերաժշտություն:

Նա ուզում և հոգևոր կրթություն և դաստիարակություն: Նա համոզված և, վոր առանց կրոնի յեվ հոգևոր կյանքի չկա բարոյականություն և նա հոգևոր տաճարից փափաղում է կրոնի և բարոյականության դասեր վերցնել՝ կենդանի որինակներով:

Յեւ այս ամենը ունենալով, հավատացյալ հայը պետք է պարտավորվի իր բարոյական պարտքն էլ կատարած լինել զեպի իր հոգևոր յեղբայրը, վարձատրել նրան պատվավոր կերպով, իհաստ, սրտի ավելցուքով:

Համաձայնեցեք, վոր շատ է հին և ազնիվ՝ գոյություն ունեցող վարձատրութեան ձևը: Որինակ, ինչ է ներկայացնում իրենից գանձանակը, վոր մեր քահանաները, զպիւրները և հոգաբարձուները՝ հավաքում յեն յեկեղեցիներում աղոթողներին: Գանձանակները և նրանց հավաքելու ձևը արդյոք ինչօր է տարբերվում փողոցներում և յեկեղեցու դռներ նստած և վողորմութեան հայցող մուրացկաններից: Չե՞ վոր նրանց էլ է ժողովուրդը մի մի կռակեկանոցներ տալիս, մեր քահանաներին ու հոգաբարձուներին ել: Յեւ իր տուչութեան գործում ժողովուրդը միանգամայն արդար է: Դուք ափսե եք ման ածում մուրացկանի նման, նա էլ Չեղ վարձատրում է աշնպես, ինչպես սովորական մուրացկանին: Փոխեցեք ձևը, վերացրեք այդ ազնիվ կարգերը, հոգեկան բավականութեան տվեք հավատացյալին և դուք պատվավոր կերպով կը վարձատրվեք:

Միթի նույն բանը չե որինակատարութեաների ժամանակ ստացվող արդյունքը: Նույն անվորոշ, կամքի վրա թողնված և վերջապես՝ դժգոհութեաններով ու անվորոշութեաններով լի մի գրութեան, վորից վերջիվերջո դժգոհ է անբավարար կը մնան թե քահանան և թե ծխականը և վորի հետեանքում յեկեղեցին և յեկեղեցականը կը նսեմանան հավատացիալի աչքում:

Այս ամենի կարգավորելը վո՞չ միայն ժամանակի պահանջ է, այլ և՛ յեկեղեցու գոյութեան ու նրա փրկութեան ամենաանհրաժեշտ պայմանն է:

Յեւ ցանկութեաններով ու կանոնադրութեամբ ընդգծված բարեփոխութեաններից ամենաեականը և առաջինը՝ նոգեվոր պաշտոնեյության համար ստացվող յեկամուտի ծնվի փոխելու խնդիրն է. ուստի և ամեն մի ջանք գործ պետք է զբոլի՝ այդ խնդիրը առաջին հերթին լուծելու: Այլապես, դարձյալ կը մնա հինը, անցանկալին և հետադիմականների վախազի իրականացումը:

Իսկ ովքեր յեն հետադիմականները:

Դժբաղդարար, դրանք Թիֆլիսում մի քանի քահանաներ յեն: Իրանցից վոմանք շատ ծուխ ունին և գոյութեան ունեցող ձևը նպատակահարմար յեն գտնում և ամեն մի նորութեան ու

բարեփոխութեան նրանք չարիք յեն համարում: Վոմանք, անգիտակցարար, կասկած յեն առաջինների հետ և վոմանք էլ՝ անձնական հաշիվներով տարված՝ դուքս յեն յեկեղեցու պարտակ և ինչպես միշտ, այս անգամ էլ՝ ամեն մի սկզբունք և գաղափար վոտնակոխ արած՝ պայքար յեն մղում վիժեցնելու յեկեղեցական բարեփոխութեանները՝ պղտոր ջրում ձուկ վորսալու հավակնութեամբ:

Ավելի տխուր և զարմանալի և այն հանգամանքը, վոր յեկեկա այն քահանաներից մի քանիսը, վորոնք իրենց իղձերով ու ցանկութեաններով ծեծում էին պատգամավորական ժողովի դռները, հարա-հրոց եին գցել և պահանջում էին անմիջապես իրականացնել յեկեղեցական ամենալայն բարեփոխութեաններ, մինչև իսկ՝ ստորագրութեաններ եին հավաքում իրենց քահանայական սրեմը՝ հանելու և աշխարհիկ շորեր գործածելու համար, այսոր առանց հաշվի նստելու, դուքս են յեկեղեցի իրենք-իրենց ստորագրած և ընդունած սկզբունքի դեմ պայքար են մղում...

Յիրք հարց եք տալիս նրանց թե ինչու յեն ընկել հակասութեանների մեջ, իսկույն նրանցից նյութապես ապահովածները պատասխանում յեն՝ դեռ ժամանակը չե յեկեղեցական բարեփոխութեան:

Իսկ մենք հարց յենք տալիս նրանց. արդյոք յե՞րը և ժամանակը Միթե այն ժամանակ, յերը իրենք մի մի բու դարձած՝ կը նստեն սովորականների վերածված մեր յեկեղեցիների բեկորների վրա՝ յեվ, վա՛յ վա՛յ կը կանչեն...

Բայց միթե՞ կարելի է մոլորեցնել հավատացյալ ժողովրդին: Կամ մեթե՞ կարելի է մի որ բարեփոխական ծրագիր ընդունել և ստորագրել, իսկ մյուս ուր՝ ամենահետադիմական գաղափարի ծառայել և ժողովրդի հավատն ու համբերութեանը ի վաճառ հանել:

Մեր հարգելի քահանաներից նրանց, վորոնք գիտութեամբ կամ անգիտութեամբ հակասութեանների մեջ յեն ընկել, մի խորհուրդ միայն կտայինք. սթափվել, ուղղել իրենց սխալները, ներշնչվել բրիստոնական անկեղծ սիրով, վերականգնանալ և դառնալ աշնաղ, վորտեղից սկսեցին՝ յեկեղեցական լայն բարեփոխութեան ծրագիրը:

Իրավացիորեն մենք առաջին պատիվը հայ յեկեղեցական բարեփոխութեան գործի՝ տվինք Թիֆլիսի քահանայութեանը: Ապա ուրեմն, թող նրա՝ այժմ այլ կերպ մտածել ցանկացող մասը՝ ուղղի իր սխալը և այդ գործում առաջապահի դիրքերում լինի:

Մենք պետք է հաշվի առնենք մեր յեկեղեցու արդի անփառունակ վիճակը: Յեւ հավատացյալ ժողովուրդն ու հոգևորականութիւնը մի հոգի դարձրած՝ մեր յեկեղեցու վիճակը բարեկամութեան և նրան զենք իր կոչման բարձրութեան վրա, վերադարձնել հավատացյալ անհատը աշխտեղից հոգեկան բավականութիւն ստանալ, իսկ հայ քահանան կամ հոգևորականը՝ ծառայած լինելու իր իսկական կոչմանը:

Անշուշտ, ընտրյալ հայրապետը հաշվի կառնի վե՛ջ միայն վրաստանի թեմական պատգամավորական ժողովի վերոշումները՝ յեկեղեցական բարեփոխութեան բնագավառում և նրա միջնորդութիւնը՝ այս տարվա ընթացքում Նշմիածնում հրավիրելու համազգային, կամ գոնե՝ համամիութենական յեկեղեցական համագումար և լուծելու՝ յեկեղեցական արմատական բարեփոխութեան ծրագիրը, այլ և, գերազանցորեն, հայոց հայրապետը հաշվի կառնի հայ յեկեղեցու և հավատացյալ ժողովրդի իրար հետ ամուր կապելու սկզբունքը և ժամանակի գոյ ու հրամայող պահանջը և անուշադրութեան չի մատնի հայ յեկեղեցու բարեփոխութեան սուր կարիքը:

Իրեն ընդհանուր յեկեղեցական բարեփոխութեան ծրագիր, վորը մեր ազատված յեկեղեցին և հայ հավատացյալ յեղբայրութիւնը, վոր ինքը ժողովուրդն և, պետք է ընդունեն և համազգային կամ համամիութենական համագումարի բովից անցկացրած և վավերացրած՝ կյանքի մեջ անցկացնեն, մենք առաջարկում յենք հետեւյալ կանոնադրութիւնը, վորի մեջ մտնում յեն բոլոր աշխատակցութիւններն ու վորոշումները, վորոնք նախատեսված յեն՝ Թիֆլիսի հայ քահանայութեան առաջարկութիւնների մեջ և սկզբունքով ընդունված՝ վերահայ թեմական պատգամավորական ժողովից՝ 1925 թ. հոկտեմբեր ամսին:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՅՈՒՏ ՅԵԿԵԼԵՑԱԿԱՆ ՅԵՂԵՍԵՐՈՒԹՅԱՆ

I. Նպատակ յեւ գործունեության յեղանակ

Ազատ յեկեղեցական յեղբայրութիւնը հիմնվում է Թիֆլիս քաղաքում և նպատակ ունի ընդհանրացնելու՝ վրաստանի հանրապետության մեջ գտնվող հավատացյալներին, նրանց կրօնական պահանջները բավարելու համար և հայ առաքելական յեկեղեցու մտցնելու՝ հետեւյալ բարեփոխական ծրագիրը:

ա. Հայ յեկեղեցին զենել իր կոչման բարձրութեան վրա, վերականգնելով աշխտեղ առաքելական պարզութիւնը և քրիստոնեական վոգին:

բ. Ազատել յեկեղեցին կուսակրոն հոգևորականութեան դասային և դասակարգային իշխանութեան ոտարամուտ կացութիւնից և վերահաստատել առաքելական լայն ժողովրդական-ընտրական վորոշած:

գ. Մտցնել ժողովրդին անհասկանալի գրաբառ լեզվի փոխարեն՝ կենդանի աշխարհարառ լեզուն:

դ. Հավաքել և տարածել հավատացյալների մեջ յեկեղեցական կանոնները, վորով հնարավորութիւն տալ ամենքին՝ յուրացնելու քրիստոնեական սիրտ վոգին և դառնալու գիտակից քրիստոնեաներ:

ե. Վերացնել յեկեղեցականների և աշխարհականների միջի տարբերութիւնը՝ հատուկ տարազը, պաշտոնավարութեան համար ստացվող յեկամուտի մուծ ձեւը ու սահմանել պարզ ու պատվաբեր ձեւ:

Յ2. Ազատ յեկեղեցական յեղբայրութիւնը բացարձակապես անքաղաքական է և նրա անդամները բոլորանվիր գորավիզ խորհրդային-համայնական վարչաձեւին, ճանաչելով աշխատանքը զոյութեան և հասարակական զարգացման հիմք:

Յ3. Իր նպատակները իրականացնելու համար յեղբայրութիւնը՝ ա. Բաց և անուծ կրօնական լսարան, ուր ցանկացողները կապարդանան իրենց կրօնարարության և յեկեղեցական գիտելիքները հալստացնել:

բ. Կազմակերպում է դասընթացներ, դասախոսութիւններ, գրույցներ և հոգևոր բովանդակութեամբ համերգներ:

գ. Հրատարակում է իր բերան թերթը:

դ. Հրատարակում է կրօնարարության ու պատմագրական բովանդակութեամբ բրոշյուրներ, գրքեր, քարոզներ, ավետարան, տաղարան և այլն:

յե. Կառավարում է խորհրդային տեղական մարմիններից, պայմանագրով ստացած յեկեղեցական գույքը:

զ. Կնքում է մասնավոր իրավական բնույթ ունեցող գործառններ, վորոնք կապված յեն պաշտամունքի գործածութեան հետ, ինչպես որինակ՝ քարոզիչներ կամ յերգեցիկ խումբ հրավիրելու համար պայմանագրեր, փայտ մատակարարելու, յեկեղեցիների վերաշինութեան և այլն գործառններ:

է. Մասնակցում է կրօնական ընկերութիւնների համագումարներին:

ը. Պահում է շրջիկ քարոզիչներ կրօնարարության գրույցներով հարստացնելու համար հավատացյալների հոգեկան պահանջները և կազմակերպում է յեկեղեցական շրջիկ յերգեցիկ խմբեր:

թ. Նյութապես ու բարոյապես ուզում ե յեկեղեցու կարիքավոր պոռնանյաներին և առհասարակ յեղբայրութեան անդամներին և չբավորներին:

Ծանոթութիւն՝ Ներկա հոգւածի ա, բ և գ. կետերում հիշատակված ձեռնարկութիւնների համար պետք է ստացվի պատշաճ իշխանութեան թույլտվութիւնը ընդհանուր հիմունքով. ա. և բ կետերի համար այն ժամանակ միայն, յիժե կատարվում յեն աղոթատան շինութիւնից դուրս:

II. Յեղբայրութեան կազմը

4. Յեղբայրութեան անդամ կարող է լինել սույն բարեփոխական ծրագիրը համակրող և իրականացման համար աշխատել ցանկացող ամեն մի չափահաս անձ Յեղբայրութեան անդամների թիվը սահմանափակված չէ:

5. Յեղբայրութեան անդամներն ընդունվում և հեռացվում յեն ընդհանուր ժողովների վորոշմամբ: Ընդունելու համար՝ հարկավոր է ձայների պարզ առավելութիւնը, իսկ հեռացնելու համար՝ յերկու յերրորդը:

6. Ամեն մի անդամ կարող է հոժարական հեռանալ, այդ մասին համապատասխան հայտարարութիւն տալով յեղբայրութեան խորհրդին:

Ծանոթութիւն ա. Յեղբայրութեանը ներկայ կանոնադրութեան հիմունքներով կազմակերպում է իր ճշուդերը հանրապետութեան ուրիշ վայրերում:

Ծանոթութիւն բ. Յեղբայրութեանը կապ է պահպանում ուրիշ սույնանման յեղբայրութիւնների հետ, վորոնք գոյութիւն ունին Վրաստանի հանրապետութեանից դուրս և հետապնդում յեն միատեսակ նպատակ:

Ծանոթութիւն գ. Յեղբայրութեան անդամների ցանկը յորաքանչյուր տարի ներկայացվում է Վրաստանի ներքին գործոց կոմիտեին:

III. Յեղբայրութեան միջոցներ

7. Յեղբայրութեան միջոցները կազմվում յեն՝

- ա. Անդամակցական կամավոր վճարներից,
- բ. Կամավոր նվերներից՝ դրամով կամ իրերով,
- գ. Ծխական տուրքերից,
- դ. Կերկրանաշների արդյունքից և
- յե. Հոգևոր համերգների, դասախոսութիւնների և յեղբայրութեան կազմակերպած գեղուցումների մուտքերից:

IV. Յեղբայրութեան գործերի կառավարությունը

8. Գործերը կառավարող բարձրագույն տնօրեն մարմինը անդամների ընդհանուր ժողովն է, վոր յեղբայրութեան նպատակին և պաշտամունքին՝ վերաբերող ընդհանուր ժողովների վճիռներն ու հրահանգները ի կատար ածելու համար ընտրում է՝

ա. Խորհուրդ և

բ. Վերահսկողիչ հանձնաժողով

Իսկ պաշտամունքի հետ կապված տնտեսական գործերը վարելու, գույքերի վերաբերյալ պայմանագրեր կնքելու, ծառայողներ վարձելու և այլ մասնավոր իրավական բնույթ կրող գործառնքներ կատարելու համար՝ ընտրում է հատուկ լիազորներ, վորոնք գործում են իրանց առկած լիազորութիւնների սահմաններում:

Ծանոթութիւն. Խորհրդի և այլ ընտրովի պաշտոնյաների ցուցակը ներկայացվում է Վրաստանի ներքին գործոց կոմիտեին ի տեղեկութիւն:

9. Յեղբայրութեանը ունի իր կնիքը՝ «Ազատ Յեկեղեցական Յեղբայրութիւն» վերաատութեամբ:

V. Ընդհանուր ծուղով

10. Ընդհանուր ժողովներն որինական են, յիժե ներկա յեն անդամների կիսից ավելին: Բոլոր խնդիրները վճռվում են բաց քվեարկութեամբ և ձայների պարզ մեծամասնութեամբ, բացի՝

ա. յեղբայրութեան փակման,

բ. ներկա կանոնադրութեան փոփոխման և

գ. անդամների հեռացման հարցերը, վորոնք պահանջում են քվեարկող ձայների յերկու յերրորդի մեծամասնութիւնը:

11. Յիժե առաջին անգամ, կվորումի բացակայութեան պատճառով, ընդհանուր ժողովը չը կայանա, հրավիրվում է նույն խնդիրները քննելու համար՝ յերկրորդ ընդհանուր ժողով, վորն որինական է՝ առանց հաշվի առնելու, թե քանի անգամ է ներկա գտնվում:

VI. Կանոնադրութեան փոփոխությունը

12. Ներկա կանոնադրութեանը կարող է փոփոխվել ընդհանուր ժողովի վորոշմամբ. փոփոխված կանոնադրութիւնը ուժի մեջ է մտնում՝ ներքին գործոց կոմիտեին հաստատութիւնից հետո:

Ծանոթութիւն. կանոնադրութեանը կարող է փոփոխութեան յենթարկվել պետական համապատասխան որդանի առաջարկութեամբ ևս:

VII. Համագումար

13. Յեղրայրութիւնը իրաւունք ունի համաձայնութիւն դաժանաբքի ուրիշ միութիւնների հետ համագումարներ կազմել, կրօնին և յեկեղեցուն վերաբերյալ խնդիրներ քննելու և լուծելու համար:

VIII. Յեղրայրության փակումը

14. Յեղրայրութիւնը կարող և փակվի՝

ա. Կառավարութեան համապատասխան մարմնի կարգադրութեամբ և

բ. Անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ:

Ծանոթութիւն. Իր հակառիկական գործողութիւնների համար ամեն մի անդամ պատասխանատու և որեւի առաջ անհատապէս:

15. Յեղրայրութեան փակման դեպքում կառավարութիւնից ուղտագործութեան պայմանով ստացած գույքը լիովին վերադարձվում և պետական համապատասխան մարմինն ընդունելութեան ցուցակով, իսկ ֆաջյալ գույքը՝ ընդհանուր ժողովի վորոշմամբ՝ հատկացվում և կամ նմանորիկակ մի ալլ միութեան կամ սույն կանոնադրութեան սկզբունքներին համապատասխանող վորիկ նպատակի:

Վերջացնելով մեր առելիքները և ծանոթացնելով հայ հաժաւաջյալ համայնքին յեկեղեցու բարեփոխութեան շուրջը յեղած անցուղարձի հետ, մենք հայտնում ենք, վոր ներկայիս Թիֆլիսում և ալլուր գործող այն մարմինները, վորոնք իրենց ծրագրում գրել յեն յեկեղեցին կանոնավորելու և նրան դարձնելու սուրբ-լական նախնական գրութեան, մի նպատակ ունին միայն. յեկեղեցին մարել, զտել յեզ դարձնել իսկական քրիստոնեական տանար, վորտեղից ամեն մի հաժաւաջյալ կարողանա լսել միմիայն սիրո յեզ բարոյականութեան կենդանի յեզ զեղեցիկ խտար:

Յեզ ալլ բանը իրականացնելու համար ամեն մի ազնիվ հաժաւաջյալ հրապարակ պիտք և գա և իր ձայնը միացնե մեր ձայնին:

Մենք անշտտողականներ չենք: Մենք սիրում յենք մեր հիկաժուրց յեզ պատմական յեկեղեցին յեզ միահաժմոն ջանքերով ձգտում յենք նրան դնել իր կոչման բարձրութեան վրա, աաւժաւացնել յեզ նրա բեմի վրա թողնել միայն ՀԻՄՈՒՄԻՆ վար կենդանի բար զներով հրապարե ծնրերի հետ նաեզ յերիտապարոյներին ու մանուկներին յեզ մեր յեկեղեցին դարձնել սիրո յեզ բարոյականութեան լսարան յեզ սրտութեան սրբոց:

ՀՀ Ազգային գրադարան



NL0158836

